

ՇԱՂԿԱԴՐՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ  
Պ.ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ԱՐԵՎԱԳԱԼԸ» ՎԵՊՈՒՄ

Խոսք կառուցելու, տարողունակ ու ծավալուն մտքեր արտահայտելու գործում բացառիկ է շաղկապների դերը:

Շաղկապները պարզ նախադասության կազմում իրար են շաղկապում նախադասության համազոր անդամներ, որոնք գտնվում են համադասական տարբեր հարաբերությունների մեջ: Բարդ նախադասության կազմում շաղկապներն ավելի լայն շարահյուսական -կապակցական գործառնությով են համղես գալիս՝ արտահայտելով նրա կազմի մեջ մտնող նախադասությունների ամենաբազմազան համադասական ու ստորադասական հարաբերություններ:

Անառարկելի է, ուրեմն, շարահյուսական կապակցության այս զորեղ միջոցներից մեկի՝ շաղկապների դերը, մանավանդ կապված թեմայի ընտրության հետ:

Շաղկապները ոճական լիցքավորման տեսանկյունից անգնահատելի «ծառայություններ» են մատուցում խոսքի գեղագիտական ու տրամաբանական խնդիրներին:

Այս առումով տեսնենք, թե ոճաիմաստային ինչ արժեք են ներկայացնում շաղկապները Պ. Զեյթունցյանի արձակում, ինչպես է նա օգտվում դրանց «ծառայությունից»:

Նախ համադասական շաղկապների մասին:

Ինչպես հայտնի է, տրամաբանական ու շարահյուսական տեսակետից համազոր, անկախ ու ինքնուրույն լեզվական միավորներ կապակցող շաղկապները համադասական են կոչվում: Թեև նրանցից յուրաքանչյուրն իր իմաստային նրբերանգն ունի, այնուամենայնիվ, ըստ կապակցական ընդհանուր հարաբերությունների՝ նրանք բաժանվում են 3 խմբի՝ միավորիչ, նեոհանախան, տոռհանան:

Ցույց տանք նրանց ոճական արժեքը:

«Ես ու Զոհրապը երբեք ընկերներ չենք եղել,-մոայլ ու հոգնած ասաց Թալեաթը»/121/:

ՈՒ միավորիչ շաղկապով Ձեռնունցյանը կապակցել է երկու ենթականեր՝ ԵՄ և Չոհոսապը, ապա երկու համագոր ձևի պարագաները՝ մոսալ, հոգնած:

«Երբ միևնույն նախադասության, պարբերության մեջ կա և, ու շաղկապների գործածության անհրաժեշտություն, ապա ու շաղկապը գործածվում է ավելի սերտ միասնության հարաբերություն ցույց տալու համար, ավելի փոքր միավորներ կապելու համար, իսկ և-ը , ընդհակառակն, կապում է համեմատաբար մեծ ծավալի լեզվական միավորներ: Ավելի կոնկրետ ասած՝ և շաղկապը, օրինակ, բարդ նախադասություններում հակված է ավելի բաղադրիչ նախադասություններ կապելու, իսկ ու շաղկապը՝ նախադասության անդամներ»<sup>1</sup>:

Կամ «Հասուն կինը հատորն է ամբողջ, հոծ ու ստվար, շռայլած ու փճացած, փայլուն ու դժգունած, բարձրացած ու ստորացած, գովված ու դատափետված, մորիկներով ու պայծառ արևներով ընդմիջված...» (249) :

ՈՒ միավորիչ շաղկապով կապակցված համագոր վերադաս որոշիչներով այս նախադասությունը գրողը կարող էր արտահայտել նաև առանց շաղկապի: Բայց այս դեպքում նախադասությունը կկորցներ իր արտահայտչականությունը, չէր շեշտվի կնոջ առեղծվածային ներաշխարհի հակադրամիասնությունը: Ռերեմն՝ շաղկապները, որպես շարահյուսական կապակցման միջոցներ, լեզվին հաղորդում են ոճական-արտահայտչական ճկունություն և հնարավորություն են տալիս արտահայտելու մտքի նուրբ տարբերություններ:

Սակայն գրողը հաշտ չէ միօրինակության հետ. բազմազանության համար նույն նախադասության մեջ համագոր անդամները կապակցում է թե՛ ու , թե՛ և շաղկապներով.

«Համոզվեց, որ գերմանացի կնոջ արդուզարդը և շարժումներ ֆրանսիական ազնվությունն ու հրապույրը չունեն» /246/:

Սակայն քանի որ և շաղկապը կապում է ավելի մեծ ծավալի լեզվական միավորներ ուստի հեղինակը այն ավելի շատ կիրառում է բարդ համադասական նախադասությունների միջև:

<sup>1</sup> Տե՛ս Ս.Գ.Աբրահամյան , Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1975թ. էջ 210:

Ձեյթունցյանի արծակի լեզվի ուսումնասիրությունը մեզ բերում է այն եզրակացության, որ հեղինակը 4 և ու շաղկապներից ընտրություն կատարելու ժամանակ կարևորում է քերականական համակարգի ևս մի առանձնահատկություն՝ բարեհնչյունությունը ու շաղկապը գործածում է այն բազմակի անդամների միջև, որոնցից երկրորդը սկսում է բաղաձայնով, իսկ 4 շաղկապը այն դեպքում, երբ նրան հաջորդող անդամը ձայնավորով է սկսվում: Իհարկե, սա էլ քարացած սկզբունք չէ գրողի համար, որովհետև էական հանգամանք է նաև այդ շաղկապներով արտահայտված հարաբերությունների քննարկը:

Օր. «Ես չեմ ընդունի կնոջ 4 այդ մարդու հավասարությունը» /42/:

«Նա առաջին անգամ կյանքում խղճաց իրեն 4 զգաց, որ ինքն իրեն խղճալուց ավելի ծանր ու նվաստացուցիչ բան չկա աշխարհում» /50/:

Բաղաձայններն ու ձայնավորները զուգորդվելով՝ մեղեդային են դարձրել հեղինակի խոսքը: Ինչպես փաստում են բերված օրինակները, մեր լեզվի այս առանձնահատկությունը մեծ հմտությամբ է կիրառել Պ.Ձեյթունցյանը:

Եվ ու շաղկապներով Ձեյթունցյանը սկսում է նաև անկախ ու ինքնուրույն նախադասություններ, որոնք տրամաբանորեն կապվում են նախորդ նախադասությունների հետ:

Օր. «Ու նա շտապում էր այդ նոր ու անծանոթ հաճույքը վայելել » /507/:

Ընդհանրապես շաղկապների առատ գործածությունը հատուկ է հատկապես գեղարվեստական ոճին:

Պ.Ձեյթունցյանի այս վեպում ևս անհամար են շաղկապների գործածությամբ նախադասություններ, որոնք շաղկապների շնորհիվ ստանում են արտահայտչական հուզաբերանգավորում. դրանք հաստատում, ժխտում, հակադրում, բացառում ու զուգադրում են առարկաներ ու երևույթներ, գործողություններ ու հարաբերություններ: Եվ դրանցով էլ շաղկապներն արտահայտում են տարբեր հարաբերություններ՝ գրողի լեզուն դարձնելով ինքնատիպ, հարուստ ու բազմաշերտ:

Այժմ տեսնենք, թե նեոհանսևան / հակադրական / շաղկապները ինչպես են ոճավորել Պ.Ձեյթունցյանի խոսքը:

Հակադրականությունը ոճական ուժեղ արտահայտչամիջոց է: Իսկ հակադրական, ներհական հարաբերություններ արտահայտելու անգուզական միջոց են դառնում հակադրական շաղկապները, որոնք տեղին ու պատշաճ ծևով են կիրառվել հեղինակի կողմից: Հակադրական շաղկապները խոսքին հաղորդում են հակադրության հնչեթանգ, շեշտադրում այն բառերը, որոնցով պայմանավորված է հակադրության առկայությունը:

Ի տարբերություն միավորիչ շաղկապների, ներհակականները մեծ մասամբ իրար են շաղկապում երկու կամ ավելի նախադասություններ:

Օր. «Բալզ հանկարծ գետինը դղողաց, աչքերը մթնեցին, և մի մեծ տարերք, որ առաջին պահ հայտնի չէ՝ երկրաշարժ էր, թե փոթորիկ, պայթեց Բերայի վրա» /1/: «Բնագոյը հուշում էր փախչել, այդ էին հուշում նաև չորս կողմից լսվող ճիչերն ու աղաղակները, քալո Ձոհրապը ետ-ետ գնաց ու մխրճվեց շենքի պատին»/51/:

Ամենագոր. քալո շաղկապը իրար է կապակցում ներհակ վիճակներ, ներհակ զգացումներ՝ մեկը մյուսից տագնապահարույց...

«Բալզ դուն բանաստեղծ ես, գեղեցիկի ու արդարի պաշտպան... քալո դուն բանաստեղծ ես, մարդասեր ու զգայուն... Քու բուրդը գրչակիցներդ եղած են զթասեր ու բռնության թշնամի... Պաշտպանած են թույլը և անմեղը... Եվ ոչ միայն հիմա, այլ դարերով, կլսե՞ս, դարերով... Ի սկզբանե... Բալզ դուն բանաստեղծ ես ... քալո դուն...»/53/:

Եվ քանի որ ամբողջ վեպում հակադրվում են իրար ներհակ ուժեր, ներհակ ազգեր ու պետություններ, ներհակ կերպարներ ու գործողություններ, գրողի լեզուն էլ հարուստ է ներհակական և ոչ միայն ներհակական հարաբերություններ արտահայտող բազմաթիվ շաղկապներով, որոնք ունեն ոճական չափազանց կարևոր դեր: Ներհակական շաղկապներին է «դիմում» Ձեյթունցյանը հայ ժողովրդի հուսահատ, անելանելի վիճակը նկարագրելիս, պատմական փաստերն արձանագրելիս, հայերի տեղահանությունն ու կոտորածը նկարագրելիս:

«Ժողովուրդը համձն առած է ամեն բանն զրկվիլ, միայն թե կյանքի ապահովություն մը ունենա...»/174/: «Իսկ զոհե՞րը... ամեն տարիքի ու սեռի, որոնց խոշտանգված մարմիններն ու տանջանքների ահավոր հետքերը

սփռված են ամենուր և այդպես էլ կմնան, քանի դեռ կեր չեն դարձել գիշատիչ քոչուներին: Բայց ի՞նչ կարող ես անել, եթե գիշատիչներն անգամ կուշտ են 1895 թվականից առ այսօր, ինչո՞ւ գրգռել նրանց ակործակը, ինչո՞ւ»/175/:

Իսկ –ը արտահայտում է հակադրական այնպիսի միավորներ, որոնցից մեկը մյուսին է հակադրվում իր տարբեր, հակառակ նշանակությամբ:

«Ամեն անգամ Ձոհրապի սիրտը մղկտում էր՝ փողոցում տեսնելով սովից մեռած թուրքերի, ու ամեն անգամ էլ նույն տանջալի հարցն էր տալիս իրեն. իսկ իրավունք ունե՞ր այդպես մղկտալու, երբ գավառներում հազարավոր անմեղ հայերի արյունն էր հոսում հենց նույն թուրքի յաթաղանից»/177/:

Իսկ – ու՛ սկսվող մախադասության մեջ իրեն իսկ տրված հարցը՝ ունե՞ր մոեխալու հոավունք, համենայն դեպս բացասական պատասխան չէր ունենալու, որովհետև ի տարբերություն թուրքի հայ բանաստեղծի, հայ մտավորականի, հայ մարդու հոգում մարդասիրությունն ու կարեկցանքը ավելի խոր արմատներ ունեն, քան ատելությունն ու դաժանությունը:

Եվ յուրաքանչյուր ներհակական շաղկապով գրողը նոր մտքեր է արտահայտում, հարստացնում ասելիքը, կատարում խոր ընդհանրացումներ.

Ներհակական հարաբերության հակասման, սահմանափակման նրբերանգ է արտահայտում սակալն շաղկապը, որը բայց շաղկապի համանիշն է:

Նրանք տարբերվում են ռճականորեն: Պերճ Ձեյթունցյանը երկու շաղկապներից ընդգծված առավելություն է տալիս բայց շղկապին՝ կարևորելով նրա կարճ ու ավելի հնչեղ լինելը: Սյուս կողմից՝ նրանք ունեն մեկ կիրառության ձևի տարբերություն. սակալն շաղկապը աղերսներ ունի վերաբերականի հետ:

Պ. Ձեյթունցյանը գործածում է մեկ հակառոտանան ժխտում արտահայտող զուգադիր շաղկապները, որոնց շնորհիվ շարահյուսական միավորների կապակցությունը դառնում է առավել կուռ ու ամբողջական:

«Թալեաթն այսպիսի սարսափ չէր ապրել կյանքում: Դա այն երիցս անիծյալ պահն էր, երբ իր բոլոր գործած մեղքերը, որ մինչև հիմա իրեն թվում էին առաքինություն, անընդհատ սղոցում էին ուղեղը և հանգիստ չէին տալիս նրան:... Ոչ թե խղճի խայթ էր զգում, այլ վախենում էր պատասխան տալու անխուսափելիությունից»/65/:

Պ. Զեյթունցյանի արձակին իրենց «ժառանգությունն են մատուցում» մաս տրոհական շաղկապները (կամ. և կամ. կամ թե. կամ թե չէ): Սրանք շարահյուսորեն կապակցում են մախադասություններ կամ մախադասության անդամներ, որոնց արտահայտած առարկաներից, հատկանիշներից, երևույթներից միայն մեկն է հավանական, մյուսները բացակայում են: Տրոհական շաղկապները ոճական ակնառու արժեք ունեն «Վերջին արևագալը» վեպում:

«Զոհրապն զգաց իր պարտությունը: Թուրք բանաստեղծը խնայելով նրա կյանքը, արհամարհել էր հայ գրողին: Կամ գուցե որպես առավել դաժան պատիժ, կյանք էր բաշխել նրան, որովհետև նա էլ գիտեր, կամ լսել էր ականջի ծայրով, որ բանաստեղծը գթասեր է և զգայուն, և հետևաբար, հայ գրողը գթասեր ու զգայուն սրտով էլ թող տեսնի իր ժողովրդի կործանումը: Կամ գուցե նրա մեջ խոսել էր արվեստակցի, արհեստակցի ծայրը, բառեր, որ սրբապիղծ էին հնչում հիմա:

Կամ. որ ավելի զգվելի էր, հազար անգամ զգվելի, գուցե պարզապես խղճացել էր նրան որպես հին ծանոթի» /54/:

Հատվածում չորս անգամ կրկնվող կամ շաղկապը խորացնում է հերոսի հոգեկան այն հուզախառով ալեբախությունը, որ ծնվել էր իրեն չսպանելու հնարավոր պատճառների շուրջ ենթադրություններ անելուց:

Գերադաս մախադասությունը ստորադասական շաղկապներով կապակցելով ստորադասի հետ՝ գրողը վարպետորեն ծավալում է ասելիքը, պատճառաբանում, հիմնավորում իր արտահայտած հիմնական գաղափարը:

Ստորադասական շաղկապները շարահյուսական կապակցության հրաշալի միջոցներ են: Դրանք խոսքին հանդիսավորություն են հաղորդում և հնարավորություն տալիս ավելի տարողունակ մտքեր արտահայտելու: Պ.Զեյթունցյանի արձակում անհամեմատ մեծ է բարդ ստորադասական մախադասությունների թիվը, որոնց բաղադրիչների կապակցումը կատարվում է ստորադասական շաղկապներով ու հարաբերական բառերով:

Ու ստորադասական շաղկապը արդի հայերենի ամենագործածական ու տարածված շարահյուսական կապակցության միջոցներից է: Նրանով կապակցված երկրորդական մախադասությունները բազմաբնույթ են՝ կախված

գերադաս նախադասության՝ բայով արտահայտված ստորոգյալի սեռից, բայի իմաստից, եղանակից, ժամանակային ձևերից:

Բազմիմաստ ող շաղկապը բոլոր շաղկապների նման զուրկ է նյութական իմաստից, բայց զուրկ չէ ոճական լիցքավորումից: Այն գործածվում է և՛ ժողովրդական, և՛ գրական ոճերում: Պ. Ջեթունցյանի ստեղծագործություններում այս շաղկապը թերևս ամենագործածականն է:

Ող շաղկապը համանիշ է որպեսզի շաղկապին, որը նպատակային հարաբերություն է արտահայտում՝ նպատակի պարագա երկրորդական նախադասությունները կապակցելով գլխավորներին: Ող-ը կարող է փոխարինվել որպեսզի-ով, միայն նրանից տարբերվում է խոսակցական-ժողովրդական երանգով:

Օր. «Խեղճ տղան գերեզման էլ չունեցավ, ող գոնե այցի գնար նրան, ժամերով նստեր կողքին, ցանկապատ քաշեր շուրջը, իր կարճատև երջանկության սահմանները գծեր ու այդ սահմաններից ներս խոտ ու ծաղիկ աճեցներ, խունկ վառեր, աղոթեր...» /603/:

Ող շաղկապի արտահայտած չափ ու քանակի իմաստը երկրորդական նախադասության և գլխավորում առկա այնքան հարաբերյալով տեղին ու նպատակասլաց է կիրառել Ջեթունցյանը՝ գնահատելով եղեռնի զոհերից մեկի Կոմիտասի մեծությունը:

«- Դուն այնքան բան ես ըրած մեր ժողովրդին համար, ող Մաշտոցեն հետո թերևս ոչ ոք չէ ըրած» /463/:

Ջեթունցյանի՝ ընտրած թեման ու ասելիքը մատուցելու համար գործածած շարահյուսական միջոցները միաձույլ են ու ներդաշն, որից մեծապես շահել է վեպի լեզուն:

Ոճական ինքնատիպ հնարանք է, երբ նախադասության այս կամ այն անդամները շեշտելու համար նրանցից հետո դրվում է օժանդակ բայը, որին հետևում է ող շաղկապով երկրորդական նախադասությունը.

Օր. «Երբ իթթիհաթականները քեզ ձերբակալեցին, հալեռն էին ող բողոքեցին ռազմական նախարար Նազըմ փաշային և բանտից ազատեցին քեզ»/457/:

Թուրքական պառլամենտի անդամ Վարդգեսի պատասխանն է սա Թալեաթին, երբ վերջինս հանիրավի մեղադրանքներ էր չարտում հայերի հասցեին:

«...Հայերն էին, որ բողոքեցին...» նախադասության միտքը կարելի էր արտահայտել և այսպես «... հայերը բողոքեցին...», բայց գրողի նպատակն էր շեշտել հայերի մտահոգությունը՝ տրամաբանական շեշտը դնելով հայերն ենթակայի վրա: Որ-ը այստեղ ինքնատիպ սաստկական կիրառություն ունի: Այս կառույցը հատուկ է ժողովրդական լեզվին:

Հայտնի է, որ մեր լեզվում որ շաղկապը որպես թարմատար գործածվում է բազմաթիվ հարաբերական բառերի ու շաղկապների հետ՝ կազմելով բաղադրյալ ձևեր՝ այնպես որ, այնքան որ, եթե որ և այլն:

Սրանց գործածությունը Ձեթունցյանը հասարակ ոճեր է ստեղծել՝ ոճական բազմազանություն հաղորդելով խոսքին:

«Տեղական պաշտոնյաների մեծ մասը հենց այդ մարդկանցից է բաղկացած, այնպես որ հայերի համար տեղական իշխանություններից արդարություն ակնկալելը առնվազն միամտություն կլիներ» /501/:

Պ.Ձեթունցյանի արծակում, որպես շարահյուսական կապակցման միջոց, առատորեն գործածվում է նաև թե շաղկապը: Ինչպես որ-ը, թե-ն նույնպես մեկնական բազմիմաստ շաղկապ է և դարձյալ խոսքից դուրս բառային նշանակություն չունի:

Նրանցով սկսվող երկրորդական նախադասությունների պաշտոնը կախված է գերադասի և ստորադասի բովանդակությունից, շարադասությունից, հնչերանգից:

Թե-ն կապում է հարցական անուղղակի խոսքը հեղինակային խոսքին. «Կարծես նախազգում էր այս տխուր ավարտը, որ երբ կոնգրես գնալուց առաջ նրան հարցրել էին, թե նա ոչ մի եվրոպական լեզու չգիտի, հապա ի՞նչ լեզվով պիտի խոսի, այս պատասխանն էր տվել. «Պիտի խոսիմ լեզու մը, որ համաշխարհային է և տառապանքի լեզուն է միաժամանակ, այսինքն՝ պիտի լամ...» /44/:

Ձեթունցյանը կապակցվող անդամներին հավելման իմաստ, ուժ ու շեշտվածություն տալու և խոսքը առավել արտահատիչ դարձնելու համար թե շաղկապը գործածում է կրկնադիր:

«Ե՛վ եթե ուրիշները զգուշությամբ էին ոտք դնում օտար դեսպանատների շենից ներս, ապա Ձոհրապը չէր թաքցնում իր հերթական այցելությունը,

ընդհակառակը, ուզում էր այդ մասին տեղյակ լինեն թե թուրքերը, թե եվրոպացիները» /561/: Թե ...թե շաղկապների կրկնադիր գործածությունը, ինչպես տեսնում ենք, «մասնակցում է» կերպարի ամբողջացմանը՝ շեշտելով նրա բնավորության որոշ կողմերը՝ համարձակությունը, արժանապատվության բարձր զգացումը: Ավելացնենք, որ այստեղ թե...թե-ն համանիշ է և...և-ին և կարող էր փոխարինվել նրանցով, բայց թե-ն նախընտրելի է՝ բազմազան ունենալու և ասելիքը ավելի շեշտելու նպատակով:

Թե շաղկապի երկբայական իմաստը շեշտելու և նույնիսկ անհավանական դարձնելու նպատակով գրողը նրա հետ գործածում է հոր եղանակավորող բառը.

Օր. «-Ապա կանգ առավ և հոր թե շշուկով խոսեց, մինչդեռ ծայրը հասնում էր մինչև փողոցի մյուս ծայրը: -Ձենքով, միայն գենքով են հողի տեղ ուռնում: Իսկ դուք դիմումներ եք գրում մեծ տերություններին» /388/:

Թե շաղկապի կասկածելի, թեական իմաստը խորանում է միայն այն դեպքում, երբ այն լրացնում է գերադասում գտնվող բվայ բային:

Օր. « Ջոհրապին մի պահ բվագել էր, թե վերջապես հասել էր իր նպատակին, սահմանադրությունից հետո արդեն կարծես հնարավորություն կար համերաշխ միություն ստեղծելու բոլոր հայերի միջև: ... Բայց այս էլ քանիերորդ անգամ, նա մոռանում էր, որ Թուրքիայում ապրող հայը իր նպատակին ոչ թե հասնում է, այլ լավագույն դեպքում՝ միայն մոտենում» /412/:

Իսկ. երբ. ուր. և. որովհետև շաղկապները շարահյուսական կապակցման հարուստ միջոց է դարձրել Պ. Ջեյթունցյանը՝ կառուցելու մի խոսք, որն արտահայտում է բազմազան հարաբերություններ՝ ներհակական (իսկ), ժամանակային (երբ հարաբերական դերանուն), միավորման (և), մեկնական (որ), պատճառահետևանքային (որովհետև).

Իր խոսքը միօրինակությունից զերծ պահելու, անգամ ամենամանհրաժեշտ շաղկապներով ոճը չժանրաբեռնելու և բազմազան, աշխույժ, արագահոս դարձնելու նպատակով գրողը դիմում է լեզվական մի երևույթի՝ զեղչման: Ջեղչումը խոսքը դարձնում է համառոտ և ուժգնություն է տալիս գաղափարին: Օր. «-Ռու մոռանում ես ում հետ ես խոսում, - սաստեց Ջեմալը

-Իսկ դու մոռանում ես ում տան ես գնտվում...

-Այդ դու ես մոռանում, թե Թուրքիան ում տուներ է, դու» /494/:

Այստեղ շաղկապի առկայությունը կամ բացակայությունը էական որևէ փոփոխություն չի մտցնում նախադասությունների շարահյուսական և իմաստային հարաբերությունների մեջ, պարզապես «փաստ է, որ անշաղկապ բարդ նախադասություններում բաղադրիչների միջև դրսևորվող շարահյուսական և իմաստային հարաբերությունները նույնպիսի որոշակիությամբ ու հստակությամբ չեն արտահայտվում, ինչպես շաղկապական բարդ նախադասություններում: Զէ՝ որ հնչերանգը իվիճակի չէ տասնյակների հասնող շաղկապական միջոցների դերը կատարել»:<sup>2</sup>

Ձեթոնցյանի լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը գերազանցապես գործածում է շաղկապական բարդ նախադասություններ, որոնց մեջ շաղկապները որակական, շարահյուսական, իմաստային հստակ ու որոշակի հարաբերություններ են արտահայտում:

Սինչդեռ անշաղկապ նախադասություններում տրամաբանական հարաբերությունները չեն շեշտվում, դրանք «Կռահում են խոսքի ընթացքից, առանձին բառերից, բայի եղանակից, հնչերանգից, դադարներից, նախադասությունների բնական հաջորդականությունից: Անշաղկապ նախադասությունները, բնականաբար, չեն կարող արտահայտել տրամաբանական հարաբերությունների այն բոլոր նրբությունները, որոնք առկա են շաղկապավոր կապակցությունների դեպքում: Հաճախ հնարավոր չէ ճշտորեն որոշել հարաբերությունների բոլոր տիպերը»:<sup>3</sup>

Իրենց իմաստային բոլոր նրբերանգներով աատճառի հարաբերություն են ցույց տալիս որոսիհետև, քանի որ շաղկապները: Օր. «Ինչու՞ կայսրության բոլոր ազգերը իրենց կենտրոնը պահեցին մայր հողի վրա, իսկ անցյալ դարի կեսերին հայերը Պոլիսն ընտրեցին որպես հայ կյանքի կենտրոն: Դա ի՞նչ կարճատեսություն էր, աններելի կարճատեսություն, սա հայոց մեծագույն սխալն էր, որոսիհետև անընդհատ ուղեկցում էր նրանց /444/:

<sup>2</sup> Լ. Գարեգինյան, Ժամանակից հայոց լեզու, Ե., 1989, էջ 152:

<sup>3</sup> Գ.Բ. Զահուկյան, Ֆ.Յ. Խլղաթյան, Հայոց լեզու /ոճաբանություն/, 1998, էջ 152:

Հնայած գաղափարական և զգացական հագեցվածությամբ՝ այս նախադասություններում ոռոմիեւոյ մենադիր շաղկապը չեզոք դեր է կատարում ոճի առումով, և գլխավորի ու երկրորդականի կապը թույլ է արտահայտված:

Ոռոմիեւոյ շաղկապի՝ կրկնադիր և զուգադիր գործածվելու դեպքում նրա ոճական արժեքը ավելի ցայտուն է դառնում: Դա լավ է երևում հետևյալ օրինակում. «Զոհրապը շուտով հոգնեց գուժկանի պարտականությունից ու լռեց, լռեց, ոռոմիեւոյ ինքն էլ էր հավատում ... վստահ էր... առաջ սպսում էր, որ առարկեն իրեն, վիճեն հետը, հակառակն ապացուցեն: Այլևս կարիք չուներ, ոռոմիեւոյ...Ոռոմիեւոյ հայու դեմ է այս կռիվը» /6/:

Կերպարի հուզախռով ապրումների ողջ դրամատիզմը, տազմապը, անհանգստությունն ու հուսալքությունը խորացվում-պատճառաբանվում է ոռոմիեւոյ շաղկապի կրկնությամբ: Ոռոմիեւոյ շաղկապի կրկնապատկությունը դարձնելով ոճական արտահայտչամիջոց՝ գրողը իր խոսքին թափ ու բանաստեղծականություն է հաղորդում, մեծացնում է ասելիքի ներգործության չափը: Կրկնապատկությունը գրողը միջոց է դարձնում նաև տարբեր մտքերը մի հանգույցի մեջ սերտորեն կապելու: Օր.«...Ոռոմիեւոյ համիդյան գրաքննությունը արդեն սահման չէր ճանաչում», «... ոռոմիեւոյ Համիդը համոզվել էր, որ չափածոն, կարճ լինելով արծակից, ավելի արագ է կարդացվում և գրգռում հայրենասիրական զգացումները», «...ոռոմիեւոյ այն կարելի էր ընկալել իբրև ինքնություն, հայկական թագավորություն ունենալու ձգտում», «...ոռոմիեւոյ ... ի՞նչ իմանաս, թե այդ բազմակետերի մեջ մարդիկ ինչ թաքուն մտքեր կկարդան»/101/:

Այնքանով, որ ոռոմիեւոյ, քանի որ շաղկապները արտահայտում են բուն պատճառի և հիմունքի հարաբերություն, որոնք կարող են դրսևորվել միևնույն բարդ նախադասության մեջ, ուստի նյութի պահանջի դեպքում հեղինակը երկուսն էլ օգտագործում է.

«Ու քանի որ սարսափը շատ էր մեծ, մի զգալի մասը վազում էր հենց վտանգին ընդառաջ, ոռոմիեւոյ նրանց ենթագիտակցության մեջ այդ ուղղությունը գոյություն ուներ միայն հետո, ուշքի գալով, կես ճամփից հետ էին դառնում» /5/ :

Նպատակի հարաբերությունը, որ առկա է վեպի բոլոր կերպարների գործունեության մեջ, արտահայտվում է ոռպեստի շաղկապներով: Սրանք շատ դեպքերում համդեմ են գալիս որպես հոմանիշներ: Ոռպեստի – ն ոճական տեսակետից այնքան էլ չեզոք չէ, հիմնականում գործածվում է գրական լեզվում: Օր. «Կլարան բերեց վերարկուն և պահեց, որ ամուսինը հագնի: Ձոհրապը դիտմամբ դանդաղ հագավ, ոռպեստի երկարացնի իրենց համատեղ կյանքի, ինչ՞ու միայն համատեղ, իրենց երջանիկ կյանքի վերջին այս պահերը» /453/:

Ոռպեստի շաղկապը նպատակի հարաբերությամբ գերադասն ու երկրորդականը կապակցելուց բացի, նաև ավելի հուզական ու մեղեդային է դարձնում հրաժեշտի վերջին պահի նախադասությունը, որը նույնքան զգայական ելևէջումներ ու բարեհեղուկություն չէր ունենա, եթե նպատակի պարագայի իմաստն արտահայտվեր դերբայական դարձվածով:

Նպատակը մասնավորելու, սահմանափակելու, ընդգծելու համար Ձեթունցյանը շարահյուսական կապակցության ոճական միջոց է դարձնում միայն թե շաղկապը, որի հատկապես կրկնադիր գործածությունը ոչ միայն ավելի է շեշտում որոշակի, կոնկրետ նպատակը, այլև խիստ արտահայտիչ դարձնում նպատակի կարևորությունը: Օր. «Միայն թե սրտի սուր ցավը չխեղճացներ, միայն թե շնչառությունը էլ ավելի չդժվարանար, միայն թե խայտառակ չլիներ սրանց առաջ» /634/:

Չեղինակի ընտրած թեմայի պահանջով հնարավոր ու իրագործելի, անհնարին ու անիրագործելի պայմանների իմաստն ու հարաբերությունն են արտահայտում այսօրվանի շաղկապները: Օր. «Բոլորիս մեջ էլ մի կարոտ կա մշտական, խոր արմատներով. երբեք չմաշվող, երբեք չսպիացող:

Եթե նույնիսկ կյանքի այս հատվածում բացակայում է կարոտի առարկան, եթե կարոտելու բան չկա պարզապես, եթե նույնիսկ բոլորը միասին են, նույն հարկի տակ» /32/:

Շարահյուսական կապակցության միջոց է դարձել պայմանի շաղկապներից ամենատարածվածը՝ եթե-ն, որի կապակցած նախադասություններում արտահայտված է բնական, մարդկային ու իրական մի զգացում՝ կարոտը, որ մի դեպքում չէ միայն մեր ուղեկիցը, այլ շարունակ, բոլոր պարագաներում, որ շեշտում են կրկնվող եթե շաղկապները: Սա կապված է հաղորդման բնույթի

հետ: Այս նախադասություններում եթե-ն ցույց է տալիս հիմունքի հարաբերություն, իսկ վերջադաս գլխավորը սկսվել է ուրեմն բառով:

եթե-ապա զուգահյոյ շաղկապի գործածությամբ Ձեյթունցյանը ընթերցողին է ներկայացնում ճշմարտություններ, որոնք տարակուսելի չեն այլևս. օր. «եթե Օրմանյան սրբազանը մեղքեր ուներ, ապա չորս տարվա բանտարկության մեջ լիովին քավեց դրանք՝ ստեղծելով հայրենագիտական մեծարժեք գործեր» /417/:

Գերադաս նախադասության նկատմամբ ստորադասի հարաբերության և բնույթի հարցում որոշակի դեր ունեն նաև գիջական շաղկապները, որոնց գործածության պահանջը ևս բխում է երկի թեմայից, նրան առնչվող հարցերից:

ժամանակակից հայերենի գիջական շաղկապներն են քեկ, քեկուգ, քեկուսե, նալա՛ծ, փոխանակ և այլն: Այդ շաղկապների միջոցով գրողը մի երևույթ, եղելություն հակադրում է մյուսին, ցույց տալիս դրանց միջև եղած ներհակ հարաբերությունը: Օր. «Համիդը գլխ շարժումով հայտնեց իր գոհունակությունը այդ պատասխանից, նալա՛ծ Թալեաթի խոսքին չհավատաց բնավ» /311/:

Հակառակ հիմունքի հարաբերությունը ներկայացվում է որպես ենթադրական, երբ երկրորդականը սկսվում է քեկուգ, քեկուսե շաղկապներով:

Ահա մի պարբերությ, որում իրար են հաջորդում քեկ և քեկուգ շաղկապների կրկնադիր կիրառություններով նախադասություններ:

Իրական-պատմական փաստերին հավատարիմ մնալով հանդերձ՝ տաղանդավոր գրողը ստեղծագործում է ազատ և երևակայության օգնությամբ վերապրում իր հերոսի հոգեկան խռովքն աքսորի ճամփաներին:

Իսկ այդ խռովքի պատճառը թուրք կոմիսարն էր, որ «լավ մարդ կերևի...»: Բայց այդ բացառությունը Ձոհրապին ոչ թե մխիթարում, այլ ջղայնացնում էր, որովհետև նման բացառությունները ավելի մեղավոր էին թվում իր աչքին, քան բուն մարդասպանները: «Այս օրերին ոչ ոք իրավունք չուներ բացառություն լինելու, մտքում համառորեն կրկնում էր Ձոհրապը, ոչ ոք իրավունք չուներ մեղմելու իր ատելությունը, քեկ գիտեր, քեկ լավ գիտեր, որ մարդկության հույսը առաջ շարժող ուժը ոչ թե հազարներն էին, ոչ թե միլիոնները, այլ հատ ու կենտ մարդիկ: Թեկուգ թո՛ղ աննշան լինեն, քեկուգ թո՛ղ ոչինչ կախված չլինի նրանցից, քեկուգ եղեգի պես ճկվեն բիրտ քամիներից: Բայց, միևնույնն է,

կոմիսարի բարոությունը, անկախ ամեն մի տրամաբանությունից, ազդում է իր ջղերի վրա, վիրավորանք ու ծաղր թվում» /551/:

Թեոֆիլ զիջական շաղկապով և քոռ հորդորական հրամայականով գրողը ավելի է շեշտում զիջական հարաբերությունը և հակադրվում հաջորդ նախադասությամբ արտահայտված փաստին՝ թուրջ կոմիսարի բարոյանը: Իսկ հակադրությունը առավել ընդգծվում է քալո ներհակական շաղկապով և միևնույնը է միջանկյալ կառույցով:

Ինչպես տեսնում ենք, շաղկապները իմաստային լիցք են հաղորդում նախադասություններին, գրեթե նյութականանում: Այստեղ տեղին է վկայակոչել Գ.Բ. Ջահուկյանի կարծիքը. «Սովորաբար նշում են, որ ստորադասական շաղկապները որպես նախադասության անդամ հանդես չեն գալիս, այլ արտահայտում են միայն ստորադաս նախադաս նախադասության պաշտոնը, այն, թե ստորադասը գերադաս նախադասության որ անդամին է փոխարինում: Սակայն հետևողական լինելու համար այս դեպքում պետք է կամ հարաբերական դերանունները չիմարել նախադասության անդամներ, կամ ստորադասական շաղկապները՝ նախադասության անդամներ չլինելու դրույթն ընդունել վերապահությամբ...»<sup>4</sup>:

Ձեթունցյանը համեմատության շաղկապներին է դիմում գործողություններ, առարկաներ և հատկանիշներ իրար հետ համեմատելիս: Համեմատության շաղկապները շարահյուսորեն կապակցում են գլխավորի ու երկրորդականի՝ համապատասխանության ու նմանության, անհամապատասխանության ու տարբերության հարաբերության՝ իմաստային լիցք ու հնչերանգային հարուստ նրբերանգներ հաղորդելով խոսքին: Օր.՝ «Դու կարծեմ հարց տվիր ինձ: Մտադիր ե՞ք Աբդուլ Համիդի գործը շարունակել, թե՞ ոչ: Ես քեզ խոստանում եմ երեք ամսում ավելի շատ բան անել, քալո Համիդը՝ երեսուն տարում»/122/:

Կառույցը արտահայտում է համեմատության բաղդատական աստիճանի հարաբերություն: Համեմատության եզրերը Աբդուլ Համիդն ու Թալեաթն են: Գրողը իր վառ երևակայությամբ, ժամանակի ճանաչողությամբ, պատմական գործողություններն ու անհատներին գնահատելու, հոգեբանական վերլուծու-

<sup>4</sup> .Գ.Բ.Ջահուկյան,Ժամանակից հայերենի տեսության հիմունքները,Ե.,1974,էջ 451:

թյան ենթարկելու անուրանալի վարպետությամբ կենդանի երկխոսության մեջ է դրել հային և Թալեաթին:

Նախադասության մեջ քան-ը երկու հայադայ բուրքերի համեմատական անհամապատասխանությունն է արտահայտում: Նրանց ընդանուր-համեմատելի հարկանիշը հային սպանելու վայրենի մոլուցքն էր:

Հեղինակը շաղկապները դարձնում է միջոց՝ պատկերավորման ոճական հնարներով հարստացնելու իր խոսքը. ստեղծելու ընթերցողին համակող տրամադրություն, մղելու նրան՝ օբյեկտիվորեն գնահատելու կերպարները, երևույթները, իրադարձությունները:

Ոճական ինքնաբերական արժեք են ներկայացնում այն կառույցները, որոնցում գերադաս նախադասության մեջ համեմատվող առարկաներից մեկը ներկայացվում է հարցական դերանվամբ. «Ո՞վ կարող է իր ժողովրդին ավելի լավ ճանաչել, քան Ալլահի սրվերն այս մեղավոր հողի վրա...» /636/:

Ձեթունցյանի ոչ մի համեմատություն «չի կաղում», առարկայական են համեմատելին ու համեմատվողը՝ դիպուկ, կոնկրետ, որից շահում է գրողի խոսքը, առաջանում զգայական ընկալման զգացողություն:

Ձևի և համեմատության շաղկապներից ոճական որոշակի արժեք ունի ոնց շաղկապը, որը ավելի խոսակցական ոճին է բնորոշ: Այս շաղկապով է անհատականացրել հեղինակը մարդասպան Չերքեզ Ամմեդի խոհերը. «Ուշացան, ոնց գլխի չընկան, ոնց, որ շորերի հետևից ընկած՝ մոռացան բրդե ծածկոցների մասին, որ վերցրեց ու թևի տակ դրեց հիսնապետ Աբդուլռահմանը»/654/:

Սին շաղկապը ցույց է տալիս երկրորդական ու զխավոր նախադասությունների գործողությունների կատարման միաժամանակությունը:

Օր. «Սին Չերքեզ Ամմեդը ոգեշնչված է հայացքով նայում էր իր գոհին, կոմիսար Շաքիր բեյը Ձոհրապի ձեռքից հանեց մատանին, հագցրեց իր մատին, իսկ երկու կառապանները մերկացնում էին դիակները, հանում զգեստները կոշիկներն ու սպիտակեղենը, մաքրում, սակայն, հայիոյելով աղաներին, որ փոխանակ առաջ հանվեցնելու և հետո սպանելու, հակառակն արեցին: Շուկայում ոչ ոք կարգին փող չի տա այս պատառուկված շորերի համար» /653/:

Երկու ոճագործներ, մեկ գոհ, ու կատարվում են եղերական գործողություններ: Այնքան դաժան է կատարվածը, այնքան ծանր ներգործու-

թյունը, այնքան մեծ վեժժխնդրության թունուր արելության զգացումը, որ մոռանում ես նպատակդ ու տրվում ապրումներիդ:

Ժամանակի հարաբերություն է ցույց տալիս քանի շաղկապը:

Ահա Ձեռնարկի պատասխանը՝ իրենց փրկելու եկած քաջարի հայ տղաներին. «...Չէ տղաս, քանի քու գլուխդ ալ վտանգ մը չէ պայթած, ժամ առաջ փախես այստեղեն...» /629/:

Քանի, քանի ոճը շաղկապները համանիշներ են, որոնք ցույց են տալիս, որ գլխավոր նախադասության գործողությունը շարունակվում է երկրորդականի գործողության կատարման ողջ ընթացքում: Հեղինակը ոճը չժանրաբեռնելու համար գերադասում է կարճը՝ քանի՝ ոճական արժեք տալով նրան:

Նյութի հրամայականով Ձեթունցյանը գործածել է ժամանակի շաղկապներ՝ որպես բարդ ստորադասականի բաղադրիչ նախադասությունները կապող շարահյուսական միջոցներ, որոնք նպաստել են ոճի բազմազանությանը, շեշտել ասելիքը, դարձել այն պատկերավոր, արտահայտիչ, գործողությունները՝ սրընթաց, հնչեղանգները բազմաեղանգ...

Շարահյուսական բոլոր օրինաչափությունները նպատակային կիրառություն ունեն գրողի արձակում, որոնցով էլ պայմանավորված է նրա խոսքի ոճական բարձր արժեքը:

Ամփոփելով՝ նշենք, որ որպես շարահյուսական կապակցման միջոցներ՝ շաղկապները ոճական ընդգծված արժեք ունեն «Վերջին արևազալը» վեպում: Լեզվաարտահայտչական այս միջոցը կապված է հեղինակի գեղագիտական նպատակադրման հետ: Հեղինակի խոսքարվեստը պայմանավորված է և լեզվաօգտագործման անհատական ունակություններով, երկի թեմայի, բովանդակության, գրական ուղղության, սեռի, ժանրի, ժամանակաշրջանի լավ պատկերացմամբ:

Ձեթունցյանի խոսքը հետաքրքիր է, օժտված ձգողական մեծ ուժով, բազմազան ոճավորումներով, հատկանիշներ, որոնց շնորհիվ հեղինակի անգամ մեծածավալ ստեղծագործությունները ընթերցողը «կլանում է» մի շնչով: Սայրենի լեզվին գերազանց տիրապետման շնորհիվ նրա խոսքում գրեթե բացակայում են գրական լեզվին անհարիր շարահյուսական կառույցները: Ձեթունցյանն իր արձակով մեծապես նպաստում է մեր լեզվի զարգացմանը: